Հավելված
ՀՀ փոխվարչապետի N 189 - Ա
որոշման

ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ «ՎԱԼԵՐԻ ՍԱՐԳՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԿԱՀՈՒՅՔԻ ՁԵՌՔԲԵՐՈՒՄ» ԾՐԱԳԻՐ

1.	Ծրագրի նպատակը	ՀՀ փոխվարչապետի 2023 թվականի մայիսի 22-ի N 366–Ա որոշմամբ բարեգործական է որակվել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Սևան համայնքի «Վալերի Սարգսյանի անվան երաժշտական դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության նոր շենքի կառուցման ծրագիրը: Երաժշտական դպրոցի բնականոն աշխատանքները իրականացնելու նպատակով այժմ նախատեսվում է ձեռք բերել կահույք, տեղափոխել և տեղադրել այն կառուցված նոր շենքում:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Նախատեսվում է ծրագրի շրջանակներում օրենքով սահմանված կարգով օգտվել ՀՀ հարկերի, տուրքերի պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից:
3.	Բարեգործը	«Հայաստան» համահայկական հիմնադրամ (Հայաստանի Հանրապետություն, քաղ. Երևան, Բաղրամյան պողոտա 26/1, ՀՎՀՀ՝ 02507456)
4.	Ծրագիրը կատարողը	«Հայաստան» համահայկական հիմնադրամ (Հայաստանի Հանրապետություն, քաղ. Երևան, Բաղրամյան պողոտա 26/1, ՀՎՀՀ՝ 02507456)
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք, բնագավառը՝ կրթական
6.	Ծրագրի բյուջեն	9,678,900 դրամ
7.	Բարեգործություն ստացողը	Գեղարքունիքի մարզի Սևան համայնքի «Վալերի Սարգսյանի անվան երաժշտական դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն, (Հայաստանի Հանրապետություն, Գեղարքունիքի մարզ, Սևան համայնքի Չարենցի փողոց 154, 1501, ՀՎՀՀ՝ 08604654)
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2025 թվականի ապրիլի 14-ից մինչև 2025 թվականի նոյեմբերի 28-ը

9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Սևան համայնքի «Վալերի Սարգսյանի անվան երաժշտական դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության համար նախատեսվում է ձեռք բերել, տեղափոխել և դպրոցում տեղադրել՝ սեղաններ, զգեստապահարաններ, աթոռներ, պահարաններ, գրասեղաններ, կցասեղան, կցապահարան, բազկաթոռ և ամբիոն: Իրականացվելու է 2025 թվականի ապրիլի 14-ից մինչև 2025 նոյեմբերի 28-ն ընկած ժամանակահատ-վածում՝ 9,678,900 դրամի չափով:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Սևան համայնքի «Վալերի Սարգսյանի անվան երաժշտական դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության համար կահույքի պատրաստման, գնման, տեղափոխման և տեղադրման աշխատանքների իրականացում՝ 9,678,900 դրամի չափով:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Նախատեսված չեն:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Համագործակցություն չի նախատեսվում:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված «Բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի» 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

01.04.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ